«Ռեսմ-ի բաղ» („Resm-i bag-") յուրաքանչյուր հարյուր տունկ որթատնկի, պտղատու ծառի համար որպես «ռեսմ-ի բաղ» գանձվել է երկու ակչե[1]: Սակայն, ինչպես երևում է կանուն-նամեների տվյալներից, «ռեսմ-ի բաղ»-ը մտել է խարաջ հասկացողության մեջ, և պատահական չէ, որ հաճախակի հիշատակվում է «բաղ խարաջը» („bag- haracı") տերմինը: Այս դեպքում պահանջվում է որոշակի նշանակված գումար: Ըստ Էրզրումի քաղաքի կանուն-նամեի, քաղաքի հայ բնակչությունից որպես «բաղ-խարաջ», տարեկան գանձվել է 12 հազար կարաջա ակչե, այսինքն 4000 Օսմանյան ակչե[2]:

«Ռեսմ-ի ասիաբ» («Resm-i àsiab"), ջրաղացի համար գանձվող հարկի անունն է: «Ասիաբ» պարսկերեն նշանակում է աղաց: Այս հարկը թուրքերեն կոչվում է «ռեսմ-ի դեգիրման» (Resm-i degirmen), և ունի նույն իմաստը: Ըստ Էրզրումի կանուն-նամեի, հարկը գանձվում էր բերքահավաքի ժամանակ, ամառվա տաք օրերին: Հարկի չափը եղել է լրիվ տարվա համար՝ 60 ակչե, իսկ կես տարվա համար՝ 30[3]:

«Ռեսմ-ի 'միրաբի» (Resm-i mîrabi) կամ «հակ-ի շուրուբ» (hak-işurub): Հողամշակության ընթացքում ջուրն օգտագործելու համար վերցված այս հարկը, որը կոչվում էր նաև «միրաբիլիք ռեսմի» (mîrabılık resmi) կազմում էր տվյալ մարզը, շրջանը, գյուղը 'ոռոգվող մուսուլման ֆեոդալի («միր-ի լիվա»յի, զալիմի ու թիմարիոտի), ինչպես և երբեմն առանձին մյուլքադարերի, կարևորագույն եկամուտներից մեկը:

Որովհետև Արևմտյան Հայաստանի կլիմայական պայմաններում ոռոգման հարցը գյուղատնտեսության համար ունի կենսական նշանակություն, ապա հարկի այս ձևը առիթ է տվել չարաշահումների: Դա արտացոլված է Էրզրումի, Մալաթիայի և մի շարք այլ վայրերի կանուն-նամեներում:

Էրզրումի նահանգում, երբ ամառվա շոգ ամիսներին ջրի պակասը իրեն խիստ զգալ էր տալիս, ջուրը ոռոգվող ֆեոդալները ջրամբարտակներից օգտվելու համար պահանջում էին բարձր գներ: Ընչազուրկ գյուղացին պահանջված գումարը տալու հնարավորություն չունենալով, ոռոգասպես քայքայվում էր: Այդ մասին Էրզրումի կանուն-նամեում ասված է հետևյալը.

«Եվ վերոհիշյալ Լիվայում (Էրզրումում) ջրի որոշ առուներ կան որոնցով գյուղացիները իրենց մշակույթները ջրելիս են եղել: Սրանից առաջ, վերոհիշյալ վիլայեթը գրանցելու ժամանակ, գրանցող քարտուղարը կայսերական դաֆթարում հիշյալ առուների ջրերը յուրաքանչյուր գյուղին ու մշակելի տարածություններին բավարարելու չափով դաֆթարում արձանագրած է: Եվ ամառվա ամիսներին ջուրը քիչ լինելու հետևանքով տեղերին չի բավարարում:

Ջրի համար հերթի կանգնած մարդկանց ջուր չտալով, բարձր գներով հեռու գտնվող գյուղերի բնակիչներին ըստ նրանց ցանկության ջուրը վաճառելիս են եղել.... Այնուհետև հիշյալ վիլայեթը նորից գրանցելու ժամանակ, երբ առուների վիճակը մանրամասն ուսումնասիրվեց (ապա պարզվեց), որ հիշյալ լիվայում գտնվող գյուղերի բնակչության մի մասը քայքայվել ու որոշ գյուղեր ծաղկել են: Մյուլքի, վակֆի (իրավունքով) առուների տերերը

---

[1] Kanun-nâme-i vilayet-i Ergani, s. 150.

[2] Նույն տեղում:

[3] Erzrum kanunu, s. 67, Gürcistan kanun-nâmesi s. 198, Arabgir kanun-nâmesi s. 172 և այլն: